

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն արտադրանք
0.2	Ոլորտը	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժին Բաժնի պետ Արսեն Ավագյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 52 44 49, +374 11 56 46 72 Էլ. փոստ՝ arsav@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Հավաքել օպերատիվ (ամսական) տեղեկատվություն գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի վերաբերյալ և դրա հիման վրա հաշվարկել գյուղատնտեսության, մասնավորապես՝ բուսաբուծության համախառն արտադրանքը, ամսական կտրվածքով: Ցուցանիշի հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 10-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն

		բերքի ցուցանիշը կիրառվում է գյուղատնտեսության, մասնավորապես՝ բուսաբուծության համախառն արտադրանքն եռամսյակային կտրվածքով հաշվարկելու համար:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական ամփոփ հաշվետվություններով համայնքներից ինչպես նաև իրավաբանական անձանցից, հիմնարկներից ու անհատ ձեռնարկատերերից ամսական պարբերականությամբ հավաքվող տեղեկություններն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքն իր մեջ ներառում է ինչպես հիմնական, այնպես էլ կրկնակի և միջշարքային ցանքերից հավաքված ընդամենը բերքը, ամսական կտրվածքով:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հիմնական հասկացություններ</p> <p>Փաստացի հավաքված բերքը բերքահավաքի ողջ տարածությունից հավաքված բերքն է:</p> <p>Վերը նշված ցուցանիշը հաշվարկվում է ըստ հիմնական մշակաբույսերի</p> <p>ա) հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր, բ) կարտոֆիլ, գ) բանջարանոցային մշակաբույսեր,</p> <p>ե) բոստանային մշակաբույսեր,</p>

		<p>զ) ծխախոտ</p> <p>է) խորդենի</p> <p>ը) պտուղ և հատապտուղ,</p> <p>թ) խաղող,</p> <p>ժ) սունկ (ներառյալ անտառային սնկի հավաքում)</p> <p>ի) ծաղիկ,</p> <p>լ) կուտակված ցանովի և բնական խոտ ընթացիկ տարվա բերքից,</p> <p>խ) ծղոտ, սենած, սիլոս և այլ կերային մշակաբույսեր,</p> <p>ծ) ցանված աշնանացան,</p> <p>կ) և այլ ցուցանիշներ:</p> <p>Ճյուղային ընդգրկունություն</p> <p>Վիճակագրական դիտարկումները ներառում են՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն (բաժին A) գործունեության տեսակները:</p> <p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p>Հրապարակման խմբավորումներ</p> <p>Տվյալները հրապարակվում են ըստ հիմնական մշակաբույսերի և դրանց տեսակների:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տվյալները հրապարակվում են եռամսյակային պարբերականությամբ՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը»

		տեղեկատվական ամսական զեկույցի եռամսյակային հրապարակման մեջ:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել::
2.4	Հաճախականությունը	Ամսական
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Տեղեկատվությունը տրամադրում են համայնքները, իրավաբանական անձինք, հիմնարկները և անհատ ձեռնարկատերերը: Ստացված տեղեկատվությունն ամփոփվում է Երևան քաղաքի և ՀՀ մարզերի կտրվածքով: Տնտեսավարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից պաշտոնական վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p> <p>Պատասխանների մակարդակը մոտ 98% է:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	Տեղեկատվությունը հավաքվում է համատարած, ամսական պարբերականությամբ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ներկայացված տվյալների ճշգրտության ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր մշակաբույսի համախառն բերքը (տվյալ ժամանակահատվածում) համեմատելով ինչպես նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների, այնպես էլ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 12090 գյուղացիական տնտեսություններից մարզային կտրվածքով ստացված համապատասխան ցուցանիշների հետ:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված

		Եվրոպական համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ Ձև 4-ԳՏՀ (տարեկան) «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները 20 թ. բերքի տակ (հունիսի 1-ի դրությամբ)», Ձև թիվ 29-ԳՏՀ (տարեկան) «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» վիճակագրական ամփոփ հաշվետվություններ, գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 12090 գյուղացիական տնտեսություններից հավաքված տեղեկատվություն) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հավաքվող տվյալներն որակվում են նախնական: Ներկայացված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով: Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ Տարեկան հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով.</p>

		http://www.armstat.am/am/?nid=82
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:
5.4	Այլ տեղեկատվություն	Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի ցուցանիշի հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. նոյեմբերի 30-ի «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» Ձև 29-ԳՏՀ (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ում և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. նոյեմբերի 30-ի «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» Ձև 29-ԳՏ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 73-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ում:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: